



ՈՉ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԼ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԻ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY.

Արամատէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ —:— Propr. Rev. K. T. SARIAN

Բ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1940

ԹԻԻ 5



ՀՈԳԵԳՍԼՈՒՍՑ

(Տես 68րդ էջի յօդուածը)

ԱՅԺՄԵԱԿԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կ'ըմբռնե՞ս, քե միջագային ներկայ վիճակը արագորեն կը զարգանայ դեպի որոշ դեպքեր՝ կանխաձայնուած Սբ. Գրոց կողմէ, եւ այնպէս կ'երեւի քե ինչ հաւանականութիւն կայ որ Տիգրայի դրոշմերու յառաջխաղացումը արգիլուի:

Անաբեկելու համար չէ, այլ ասիկա իրողութիւնը բնական, որ պիտի կատարուի հետագայ դեպքերով: Սբ. Գիրքերը մեզի կ'ըսեն քե «եսքի օրերը մարդիկ պիտի ըլլան ծնողաց անհնազանդ, ահաւոր, բանասիրտ, անգութ, յանդուգն բարին չսիրող . . .» (2 Տիմ. 3. 1-5) եւ մենք չե՞նք տեսներ արդե՞ն քե ստոյն իրականութիւններ են:

Զգոյ՛ք կեցիր, Քրիստոս առաջնոց ըստ քե ստոյն պիտի ըլլան: «Եւ պիտի լսեմք պատերազմներ ու պատերազմներու ջուրեր . . . ազգ ազգի վրայ պիտի ելլի . . . տեղ տեղ մահաւարժաններ, երկրաշարժներ պիտի ըլլան» (Մատթ. 24. 6-35):

Ի՞նչ պիտի ըլլայ մեզի ի՞նչ տղերս ունին մեզի հետ այս եղելութիւնները, մեզի համար ազատու՛մ կա՞յ: — Բոլոր Հոգիով առաջնորդուած հաւատացեալներ մօտ ասեմէն պիտի ազատին, դուն անոնց մէջն ես:

Ի՞նչպէս կ'ընամ գիտնալ նման-սութիւնը այս խօսքին: Տե՛րը պիտի կատարէ իր խոստումը Եկեղեցւոյն համար, Քրիստոս յանկարծ պիտի երեւնայ, ակըն-բարբի մը մէջ: Եկեղեցին պիտի յախըշտակուի:

Աւելի բացատրե՛ք. — «Ինչպէս Նոյի օրերը եղաւ, այնպէս պիտի ըլլայ Որդոյ մարդոյ օրերն ալ»: Այն ասեմ ջրհեղեղի սպառնալիքը իրականացաւ, ասկայն Նոյ ազատեցաւ: Կրկին տեղի պիտի ունենայ ըսուած կործանումը, ասկայն ճշմարիտ Քրիստոնէսներ պիտի ազատին (Ղուկ. 21. 24-28, 36):

Մարդ պիտի կործանէ ինքզինքը. — Յանկարծախա՛ն կորուստ մը կ'սպասե՛ք ազգերը, մարդկային կեանքի վստահի տակ են: Պօղոս կը յայտարարէ քե կորուստը յանկարծակի պիտի հասնի անոնց վրայ . . . (1 Թեմ. 5. 3): Այնպէս կ'երեւի որ ան նախաստեւած էր այժմու անոնցի պայքողիկ ռուքերն ու աւերից քնդանօրները:

Ի՞նչ վստահիք իշխաններու, միայն Աստուած կրնայ փրկել մարդը զաղիք դաստասանէն: Մարդկային միջոցներ չեն կրնար պաշտպանել մեզ, միայն Յիսուս Քրիստոսի վրայ եղած կենդանի հաւատով կրնայ պատշարել մեզ զաղիք բարկութեան:

Մարդ ինքզինքը չկրնար ազատել, «Դուք շնորհիմով փրկուած էք հաւատով միջոցաւ, եւ այս ոչ քե ձեզեմ, հապա Աստուծոյ արագեմն է, որ մեկը չարածի (Եփես. 2. 8-9): Պարգապէս վստահե՛ք Քրիստոսի հիմա: Ան է միակ բոլոր յոյսի փրկութեան:

Թարգմանութիւն

ԽԱԻԱՐՈՒՄԸ

* * *

Ամպերը մութ՝

Դրժոխի պէս սև

Սրբ գոն իմ եւ բոլ

Ջիւշ լոյսին միջեւ,

Դուք կը խաւարիս,

Հոգիս Երես . . . :

Հուր ցոլերդ, Արեւ,

Միտ վառ, անհամար,

Յո՛ւրտ եմ արդարեւ,

Մեռած ինձ համար . . .

Ու գլխու վերեւ

Մո՛ւր երկնակամար . . . :

Բայց, Շունչ երկնային,

Սրբ պահիկ մը դուք

Փրչիս, կը ցնդիք

Սեւ ամպերն հեռուն . . .

Ու ինձ Նոր Դրօշաթիւ

Այց ծագի՛ ժպտուն . . . :

Նիւ Էոբ

Ա. Կ. ԿԻԻԼՊԷՆԿԵՍՆ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈԶ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արմոնաստէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝
Վ. Խ. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ,
Վ. Խ. Թ. ԷՌՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ,
Պ. Խ. Ե. Թ. ՈՒՄԵԱՆ.

Բ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1940

ԹԻԻ 5

ՄՕՐ ՄԸ ՎԱՐԶԻԸ

Մօր մը տառապանք, անհնարին զոհողութիւնը կամ սերը աւելի լաւ կը պատշաճի գրողի մը համար իբր նիւթ ըլլալու՝ մայրերու օրուան առթիւ, քան «Մօր մը վարձք» խորագիրը՝ զոր ընտելցինք: Անոր թելադրուեցանք կարդալով Ելից. 2. 9 ին մէջ գրուած սա խօսքերը. «Առ աս տղան՝ որ սնուցանես ինծի համար ու ես ին վարձք կու տամ», ուղղուած Մովսէսին մօր՝ Փարաւոնին աղջկան կողմէ, մեզի ծանօթ մէկ պարագային: Անպատեհ չենք զտեսնելու թէ, այսօր Տէրը ճիշդ այս պահանջը ունի բոլոր քրիստոնէայ մայրերէ, պահանջ մը՝ որուն ծայրը կցուած է գեղեցիկ խոստում մը «ես ին վարձք կու տամ», սակայն վարձքէն առաջ կայ սրբազան պարսկականութիւն մը.— սնուցանել, կրթել եւ մեծցնել զաւակը Տէրոջը համար: Կին մը զանազան ասպարեզներու մէջ կրնայ ստանձնել կերպ կերպ պարսկականութիւններ, սակայն իր ամենեւին սրբազան կոչումն է մայր ըլլալ, նկարագիրներ կերտել: Ահա կերպը իր ազգին ծառայելու, եւ առաւելապէս Քրիստոսի դասին համար կենալու: Այսպիսի մայրեր կան եւ ահա անոնց համար է «Մայրերու Օր»ը իբր արժանի զեանասուրբիւնը անոնց կատարած վսեմ գործին:

Մենք կը յիշենք խօսակցութիւն մը՝ տեղի ունեցած երկու մայրերու միջեւ: Մէկը որ դեռ երիտասարդ էր կը զանգատէր իր զաւակներուն ապերախ վարմունքներուն դէմ, երբ չէր տեսներ անկեղծ սերը իր այնքան անհաշիւ շուքով սիրոյն փոխարէն: Իսկ միւս մայրը որ տարիներ ունէր իր ետին, կեանքի դառնութիւններէն աւելի փորձառու դարձած՝ կը պատասխանէր զանգատող մօր. «Մայր մը միշտ սիրելու է, եւ յամենայն դէպս սիրելու է, նա տալու է միշտ առանց անկեղծութիւն փոխարէն»: Եւ այս պատասխանը ապշուեցանք կը մասնէր միւսը:

Ճեմարիտ է այս պատասխանը, որովհետեւ այն է իրականութիւնը: Մայր մը երբեք չի սակարկեր իր սերը, վաճառականական հաշիւ չմտնէր անոր մէջ, կու տայ այդ սերէն անընդհատ, անհաշիւ որ կարծես անսպառ է: Աստուծոյ սերէն ետքը մօր մը սերը ամենեւին սուրբ, խորունկը. վերջ եւ ճեմարիտն է: Ահա այդ սերն է որ կը մզէ զինքն զոհելու, համբերելու, ներելու եւ

հուսկ ուրեմն զոհուելու: Ամեն օր աղանասես եմք անոնց այս հոյակապ սիրոյ արարներուն: Ահաւասիկ կին մը, տե՛ս ձեռքերը ձեռք ելած, դեմքը խորեւում, կ'աշխատի անդադար եւ յոգնասպառ է: Տան մէջ ամենէն առաջ արթնցողը ան է, ամենէն ուշ քնացողը ան է: Լուացքի տեսին առջեւ անմըմունջ կ'աշխատի, կամ ասեղը ձեռքը կը կտրէ գիւղերը մինչեւ ուշ տեսն, եւ կամ հիւանդ զաւկին սնարին բովը կը հսկէ պահապան հրեշտակի մը նման: Ինչո՞ւ այս բոլորը. որովհետեւ ունի երկու սիւսուն զաւակներ, տան հայր ուսերուն վրայ: Յետոյ անոնց խնամեալ կրթութիւն տալու հոգը հալումատ կ'ընէ զինքը, զանոնք պատրաստելու կեանքի պայմարին: Ահա քե ինչո՞ւ չարաչար աշխատանք, անունը գիւղերնէր: Ո՞վ կը տեսնէ անոր աչքերէն բախող արցունքները առանձնութեան մէջ, ո՞վ կը լսէ այդ խուլ հառաչանքները որոնք կ'ելլեն վիրաւոր արեւն: Կեանքին մէջ կը մղէ պատերազմ մը որ ո՛չ մէկ տեսնէ համբաւեալ զինուորական մը չէ մղած: Բանաստեղծը կ'ըսէ. —

«Մեծագոյն պատերազմն որ երբեք մղուած չըլլայ,

Ըսե՛մ ձեզի քե ե՛րբ եւ կամ ո՛ւր է,

Զայն չե՛ք գտնէր աշխարհի քարտէսին վրայ,

Ան մղուած է «մարդոց մայրերու» կողմէ:»


Մայր մը ի՞նչ վարձք կ'ստանայ անոնց փոխարէն: — Ոչ իսկ երբեմն զնահասակն խօսք մը, յանախ դառն խօսքեր, ապերախ վարմունք, իսկ անոր մեռնելէն ետքը շուտով մոռացում: Մարդուն մէկը կ'ըսէ, «կարծես քե իրերու մարդկային ծրագրին մաս կը կազմէ սա՞ քե՛ մայր մը որքան ալ զնահասուած ըլլայ կենդանութեան տեսն, իրական զնահասութիւնը կու գայ իր մահէն ետքը»: Այո՛, ա՛յն իրերուն նման զորս կ'սկսիմք զնահասել երբ կորսնցուցած ենք արդէն:

Սակայն միտքարական է Աստուածուս կատարուած խոստումը մայրերը վարձատրելու՝ երբ անոնք չեն վարձատրուիր այսեղ մարդոց կողմէ եւ իրենց զաւակներուն կողմէն իսկ: «Այսմանաւ որ երբ անոնք հոգ կը տան իրենց զաւակներուն ֆիզիկական եւ մտաւոր կարիքներուն, զանց չընեն նաեւ անոնց հոգեկան պէտքերը: Յետոյ ոչ քե անձնասիրական ակնկալութիւններով (զաւակները իրենց սեփականացնելու ակնկալութիւն) այլ միշտ ի միջ ունենալով Աստուծոյ համար զանոնք մեծցնելու պարագան: Դեռ կը կարդանք. «Երբ տղան մեծցաւ Փարաւոնին աղջկան բերաւ եւ անոր որդին եղաւ»: Ի՞նչ բարձր եւ նուիրական պատճառ մը կը յանձնուի մայրերուն, որոնք պիտի մեծցնեն զաւակներ որ Քրիստոսին ըլլան: Երբ գտնուած են մայրեր որոնք աշխարհի տուած են հերոսներ պատերազմի դատին վրայ, փայլուն հանձնարներ գիտական, քաղաքական եւ այլն ասպարէզներուն մէջ. անոնք չեն հաւասարի այն մայրերուն, որոնք տուած են Քրիստոսի անուան համար բարեկարգիչներ, աւետարանիչներ եւ մարտիրոսներ:

Իսկ անոնց վաճառքը. երբ աշխարհ չգնահատէ, երբ զաւակներ անոնց ահպատակ զոհաբերութիւնները անտեսն, անոնք Տերոջը ձեռքէն պիտի ընդունին լիաւի վաճառք, որովհետեւ ըսած է. «Ես եւ վաճառք կու տամ»:

Խ. Թ. Ա.

ՔՐԻՍՏՈՍ ԲԱՆԱԼԻ



Փրիստոփան նմանցում է աշաղուրկ մարդու մը, որ գիշեր ատեն մութ սենեակի մը մէջ կը փնտռէ սեւ տարակայ մը որ արդէն հոն չէ՝ Նոյնը իրականութիւն է այն ամենուն համար որոնք կ'ուզեն գտնել տիեզերքի գաղտնիքը, և լուծել այս կեանքի տեղդոսումները, դժուարիմաց դէպքերն ու եղելութիւնները առանց աստուածային Յայտնութեան: Իսկապէս՝ կեանքը լի է անել փողոցներով, կղպում դռներով և անվերջ լաբիրինթոսներով, որոնք յուսախաբ կ'ընեն յոգնած ճամբորդը կեանքի շաւղին վրայ:

Սակայն չկայ ուրդեօք լուծում մը այս կեանքի խառնաշփոթ ու դժուար հարցերուն: Չկայ մէկը որ կարող ըլլայ ազատել մարդիկը իրենց դառն ու վշտալից պարագաներու ճնշումէն, և առաջնորդէ գիրենք դէպի ճշմարիտ կեանքը: Կո՛ւ, և այդ անձը Յիսուս Քրիստոս ինքն է: Անիկա ունի այն բանալիները՝ որոնք կը քօղապերծեն կեանքի բոլոր գաղտնիքները ու կը բանան գոցուած դռները: Ամեն ինչ Յիսուսով միայն կանգուն կը մնայ, առանց Անոր ամեն բան կը լուծուի, կը ցնդի ու կը կորնչի: Առանց Անոր ո՛ր է կազմակերպութիւն և կամ անհատ չորս հովերուն խաղալիքն է, ինչու որ, չունի բանալին որով՝ պարզէ կեանքի դժուարիմաց գաղտնիքները, և ունենայ նախազգիտ դեմ պայքարելու զօրութեան խաբիսի մը:

1.— Միայն Քրիստոս ունի կեանքի և մահուան բանալիները: Ծօրճ Ուաշինկթըն երբ մեռաւ, թաղեցին զինքը Մաունթ Վերնոն՝ գետնափոր գերեզմանի մը մէջ, և զայն կղպելով

բանալին նետեցին Բոթոմագ գետին մէջ, որպէսզի մէկը չկարենայ բանալ անոր դամբանը: Սակայն ի գո՛ւր, միայն Քրիստոս ունի մահուան բանալիները, Ան է մեռելներուն կենդանութիւն շնորհողը: Եթէ կը կարծենք թէ՝ առանց Անոր կեանք ունինք, մեր ամբողջ գործունէութիւնն ու հոնած աղմուկը հոգեվարքի ագեղ հոնդիւններ են միայն: Ինքն է որ ըսաւ. «Ես եմ . . . կեանքը . . .»: Եթէ կ'ուզենք ապրիլ՝ հաւատանք Անոր, եթէ ոչ կը մնանք լոկ շնչաւոր մեռեալներ՝ դատապարտուած յաւիտենական գեհնի:

2.— Միայն Քրիստոս ունի բանալին յուսալքուած հոգին մեղաց բանտէն ազատելու: Բանալին զօրութեան և հեղինակութեան խորհրդանշանն է: Ով որ զայն ունի՝ կրնայ բանալ դուռը, և ազատ արձակել բանտարկեալը: Քրիստոսի համար ըսուած է. «Բանտարկեալը բանտէն հանես» (Եսա. 42. 7): Մարդուն անկումէն յետոյ բովանդակ մարդկութիւնը ծնած է մեղաց և ապականութեան բանտին մէջ: Ահա Յիսուս եկաւ մեզ անկէ ազատելու համար:

Մարդիկ թէեւ կը ջանան իրենց գանուած եղձանեալ բանտին պատերը զարգարել, և զայն ապրելու յարմար վայրի մը վերածելու մտքով կահաւորել արդիական կահկարասիներով, սակայն անիկա կը մնայ բանտ, և հոն գտնուող մահկանացուները տակաւին կը մնան յուսախաբ և դատապարտուած յաւիտենական բանտին՝ որ է «Երկրորդ մահ»: Միայն Յիսուս կրնայ բանալ այդ բանտին պողպատեայ դռները, գիտակից դարձնելով մեզ մեր գերութեան և ապա տալով մեզ իր ազատութիւնը:

3.— Միայն Քրիստոս ունի կեանքի բոլոր հարցերու բանալին: Երբ

ցուեր ու վիշտեր պաշարեն հոգիդ, թերեւս անոնց սասակութենէն մտածես թէ լքուած և մոռցուած ես Ամենակալին կողմէ. գնա՛ Յիսուսի, Ինքն է բանալին, Իրմով պիտի հասկնաս թէ ինչպէս տմեն բոն միասնաբար քո՛ք բարիքիդ համար գործակից կ'ըլլան: Կը տեղեկանաս թէ՛ տմեն բանի մէջ Քրիստոս՝ սրբազան նպատակ մը ունի: Միայն այն տտեն կրնաս կեանքը ըմբռնել և պայքարիլ զմուտութեանց դէմ: Իսկապէս այն տտեն է որ մեր բոլոր գործախտ պարագետները օրհնութեանց աղբիւրներ պիտի դառնան:

4.— Միայն Քրիստոս ունի այն բանալին որ կրնայ բանալ Աստուածաշունչի ճշմարտութեանց գանձը: «Այն ատեն անոնց միտքը բացուեւ, որպէսզի գիրքերը հասկնան»: Ո՛չ իմացականութիւնը, ո՛չ գիտութիւնը և ո՛չ ալ ուսումը կրնան մեզի յայտնել Աստուածաշունչի ճշմարտութիւնները: Քրիստոս Ինքն է բանալին: «Անիկա կը մեկնէր անոնց ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն մէջ գրուած էր»:

5.— Միայն Քրիստոս ունի բանալին որ կը բանայ պատեհութեան դռները: «Ահա քու առջեւդ բացուած դուռ մը դրի, զոր մէկը չի կրնար գոցել»: Պողոս կ'ըսէ. «Արդ երբ ես Տրովադա հասայ, Քրիստոսի Աւետարանը քարոզելու, ինծի դուռ մը բաց եւ Տէրոջմով»: Եթէ ունիս պատեհութիւններ քու միջավայրիդ մէջ քարոզելու Քրիստոսը և վկայելու Անոր փրկարար զօրութիւնը, օգտագործէ զանոնք: Այդ դուռը բացուած է քեզի, Տէրոջը կողմէ: Քանի որ պատեհութեան դուռը բաց է, վկայէ՛, չըլլայ որ գոցուի ու սուրճը վերջանայ:

Ի վերջոյ Անիկա պիտի բանայ երկինքի դռները Իր փրկեալներուն համար: Փառք Իր Անուան:

Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՅԱԻԸ ԵՒ ԴԱՐՄԱՆԸ

Երբ Յիսուս յարեաւ մեռելներէն, բովանդակ Եկեղեցին կրնար հաւաքուիլ վերնատան մը մէջ: Իր երկինք համբարձման ատենը անոնք 120 կը հաշուուէին: Պատմութեան բոլոր դարերէն՝ ընդհանուր կերպով ամենէն ապականածն էր: Հրէաստանէն դուրս կռապաշտութիւնը գերեշխան էր, չսաստուածներն ու չսաստուածուհիներ պղծութեան ամէն երեւոյթ կը ներկայացնէին, և անոնք կը պաշտուէին րացէի րաց հոյակապ տաճարներու մէջ և մեծածախս մեհեաններու առջեւ: Ամէն Էջիսանութիւն մեծաշուք և անսիրտ կայսերականութեան ձեռքն էր: Չանգուածներ մխրճուած էին անյոյս ալլասերումի մէջ, միջոցէ զուրկ, անուս, անպաշտպան, որոնցմէ 60 միլիոն հռովմէական կայսրութեան մէջ գերիներ էին: Ծերունի ծնողք կը լքուէին մեռնելու անսուղութենէ: Տղաք երեսի վրայ կը ձգուէին և կը սպաննուէին: Մարդիկ իրարու հետ կը կռուէին իբր սուսերամարտիկներ ամփիթատրոններուն մէջ և հազարաւորներով կը մեռնէին անգութ խուժանը զուարճացնելու Բարոյական օրէնքին իւրաքանչիւր սլատուէրը կը եղծանուէր գրեթէ անխղճօրէն և անարգել:

Նախնի աշակերտներ չունէին հարստութիւն, ընկերային գիրք, ո՛ր և է փրէսթիթ, պետական օժանդակութիւն, օգնութիւն մը ո՛ր և է հաստատութենէ: Անոնք արհամարուած և խեղճ արարածներ էին, ազգեցութենէ, ուշիմութենէ, ուսումնէ զուրկ, ժողովուրդը չունէր իր հետը Նոր Կտակարանը, մինչեւ իսկ Հինը, չունէր հոգեւոր գրականութիւն, մէկ հատ իսկ

սրահ մը պաշտամունքի Պերճանք, իշխանութիւն, սովորութիւն, հանրային կարծիք ամէնը ընդգէմ իրենց էր: Անոնք կ'անարգութէին, կը հայհոյուէին, կը հալածուէին ու ենթակայ էին արքայի սորի և մահուան:

Սակայն այս նախնի քրիստոնեաներ ունէին ներքնակ ու սրբագործող Փրկչին աշակցութիւնը եւ Հոգւոյն Սրբոյ օծումը, և այսպէս օժտուած՝ զիմադրուեցին թշնամանող և հակառակող աշխարհը և խաւարին չար ուժերը ու անոնց յաղթեցին: Եօթանասուն տարուան մէջ, ըստ նուազագոյն գնահատութեան, կէս միլիոն հետեւողներ կային Յիսուսի Սբ. Հոգին իրենց հետ, անոնք անեցան չորս հազար պատիկը տալու թիւին:

Շատ է հաւատալ թէ եթէ Բող. եկեղեցիներն ու պաշտօնէութիւնը բոլորն ալ ունենային Սբ. Հոգւոյն նման զօրութիւնն ու օծութիւնը, 10 տարուան մէջ բոլոր աշխարհը պիտի գրաւէինք Քրիստոսի համար: Այժմ մենք գահեր, կառավարութիւններ, պաշտպանութիւն, հանրային կարծիք, միլիտանտներով դրամ ունինք քրիստոնեաներուն ձեռքը: Մենք ունինք պետական հաստատութիւններ, ու բոլոր պահանջուած զիւրութիւնները: Սբ. Գիրք մը ունինք որ թարգմանուած է 400 է աւելի (այժմ 1000 է աւելի Մ. Թ.) լեզուներու, քրիստոնեայ գրականութիւն այնքան առատ որքան անտառներու տերեւները: Մենք ունինք մեզի փափաքելի ամէն ինչ(*) քրիստոնէական գործ տեսնելու, ի բացառեալ Սբ. Հոգւոյն զօրութեան (ընդգծումը մերն է): Սակայն առանց ասոր, ամբ-

սո՛ւ, ո՛րքան տկար է մեր յաղթանակը երբ բաղդատենք զայն առաջին դարուն տարած յաղթանակներուն հետ:

Եթէ ո՛ր և է ուշիմ ընթերցող փորձուի զիս ամբաստանելու չափազանցութեամբ, թող բարի ըլլայ նկատի առնելու Սիոնի դիտարանին մէջ կեցող մեծ հոգիներու վկայութիւնները:

Բրոք. Գալլը, Օպերլինէն, Նշանաւոր մեկնիչ, տարիներ առաջ կը գրէր. «Պարզ է՝ որ եկեղեցիին համար ուրիշ ճար չկայ, բայց եթէ վերադառնալ բարեպաշտութեան տարրերուն: Ան պէտք է վերադառնայ Աստուծոյ և Անոր հետ հաղորդակցութեան: Բարեպաշտութեան չափանիշը պէտք է բարձրացուի եկեղեցին ի՞նչ կրնայ ընել աշխարհը դարձի բերելու համար, մինչեւ իսկ իր գոյութիւնը պահպանելու համար, առանց ունենալու խորունկ, մաքուր անձնական սրբութիւն մը»:

Ուրիշ մեկնիչ մը, Տոքթ. Պանէզ կ'ըսէ. «Եկեղեցւոյն անդամներուն մէջ ոչ իսկ 10 էն մէկը ազգու գործ մը կը կատարէ մեղաւորներուն փրկութեան և հաւատացեալներուն սրբագործութեան համար»:

Տոքթ. Փիլիպսըն կ'ըսէ. «Ընդհանուր առումով զատուած և սրբուած կեանքի մը վկայութիւնը կորսուած է, և անով կորսուած է՝ կրակէ լեզուի վկայութիւնը»:

Տ. Լ. Մուտի կը գրէ. «Առնուազն եկեղեցիին անդամներուն 10 էն ինը երեքը չմտածեր Քրիստոսի համար խօսելու . . . Ո՛հ, երանի թէ Աստուած օժէր իր ժողովուրդը, մենք ամէնքս միասին պէտք ունինք անոր, և գիշեր ու ցերեկ չհանդարտէինք մինչեւ զայն ստանալը: Աստուած զայն մեզի պիտի շնորհէ, երբ անոր համար անօթի և ծարաւ դգանք, և ըսենք Աս-

(*) Հեղինակը այս տղերք գրած ժամանակ չկային ներկայ փախադրական եւ հաղորդակցական միջոցներն ալ: Ասիկա կը նշանակէ թէ մեզ ունինք աւելի քան պէ՛տք եղածը եւ փափաքելին: Ծանօթ. Թարգ.

տուածոյ օգնութեամբ պիտի չհանգըստանամ, մինչեւ որ վերէն զօրութիւն առնեմ»:

Սբրբճըն կ'ըսէ. «Եթէ մենք չունինք Աստուծոյ Հոգին, լաւագոյն է գոցել եկեղեցիները, գամել դռները, սեւ խաչ մը քաշել անոնց վրայ և ըսել՝ Աստուած ողորմի մեզի, եթէ դուք պաշտօնեաներդ, չունիք Աստուծոյ Հոգին, աւելի աղէկ է չքարոզէք, և ժողովուրդը նստի իրենց տուներուն մէջ»:

Տօքթ. Ս. Ա. Քին կը գրէ. «Ինչ յանգգնութիւն է մեզի համար ձեռնարկել մեր առաքելութեան տոանց օծումի, երբ Յիսուս չհամարձակեցաւ քարոզել առանց օթանդակութեանը Սբ. Հոգւոյն: Ան ըսաւ իր աշակերտներուն, «Սպասեցէք մինչեւ որ վերէն զօրութիւն առնէք»: Քարոզիչներու և եկեղեցիներու մեծ սխալը այսօր ան է՝ որ շատեր Աստուծոյ համար գործի կը ձեռնարկեն, հոգիներ փրկելու համար ճամբայ կ'ելլեն առանց ունենալու Սբ. Հոգւոյն զօրութիւնը»:

Զարլզ Ֆիննի գրած է. «Ապշեցուցիչ է տեսնել՝ թէ ինչ աստիճան եկեղեցին գործնականօրէն կ'սրուած է աչքէ անհրաժեշտութիւնը այս զօրութեամբ օժտուելու . . . Ո՛հ, այն համոզումը՝ ասոր անհրաժեշտութեան մասին, և հաւատքը՝ Քրիստոսի խոստումին»:


Եպիսկոպոս Փէք ըսած է. «Եկեղեցին բռնաւորուած է մեռած դիակներով, լեցուած հաւատուրացներով, և բաղդատաբար անզօր է այն մեծ գործին համար, որուն համար ալ սահմանուած է երկինքէն»:

Ա՛րդ, Քրիստոսի Եկեղեցւոյն այս րոլոր իշխանները համաձայն են թէ մեծ կարիք մը կայ, անյեւթաձգելի, ըստիպողական, ահաւոր կարիք մը անհատապէս Սբ. Հոգիով այսօրինակ մկրտու-

թեան՝ որ պատճառէր սրբութիւն և զօրութիւն եկեղեցիներու և պատշոնեութեան:

Այն իրողութիւնը թէ՛ Ամերիկայի երեք մեծ յարանուանութիւնները 7 հազար եկեղեցիներ ունին որոնք տարուան մը մէջ չեն ունեցած մէկ հաա իսկ դարձի եկած, թէ՛ Ամերիկայի Մեթոտականներուն մէջ տարիներ երկու հարիւրի վրայ անդամական մէկ յաւելում եղած է, թէ Մեծն Բրիտանիոյ ժողովական ու Մկրտչական եկեղեցիներու մէջ այս վերջին տարիներս անդամներու նուազում կայ ցոյց կու տայ ահաւոր կարիքը Հոգւոյն Սրբոյ մկրտութեան:

Տոքթ. Ա. Մ. Հիլզ



ՓՐԿԵԱԼԻՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Քրիստոնէական կեանքը յարաճուն յառաջդիմութիւն մըն է: Երբ այս առողջ զարգացումը դադրի, յետադիմութիւնն ու այլասերումը կը սկսին: Փոթորկալից և փորձաքննութիւն լի աշխարհին, ու Փրկչին զինւորները յուսահատեցնելու ջանք թուփող Սատանային դէմ յաջողութեամբ մոքառելու համար քրիստոնեան իր կռուի ճակատը ընդարձակելով ընդատաջ երթալու է թշնամիին:

Քրիստոնէին մեծագոյն վտանգը կը կայանայ գէնքերը վար դնելով պայքարը դադրեցնելուն մէջ: Մեղքի դէմ հաւատարմօրէն կռուող քրիստոնեան վախ չունի, զի Փրկիչը պիտի չթոյլատրէ որ անոր գլխուն մէկ մտքն իսկ փնաւ կրէ:

Փրկուած անձի մը հոգեւոր կեանքին սպառնացող շատ մը վտանգներէն միայն մի քանի կ'որեւորենք. —

Ա. Առաջին սերը մոռնալ.— Այս կրնայ տատնանաբար կամ յանկարծական ըլլալ: Այս կարգի քրիստոնեան ինքզինքը տակաւին արդար և ջերմեռանդ կը կարծէ, թէ պէտեւ հոգեւոր ժողովներ քիչ յաճախէ. քրիստոնեայ տնունին ներքեւ միայն անկենդան կեղեւ մը մնացած է: Կեղծ ապահովութեան խարկանքը գրաւած է զինքը: Այսպիսի պարագաներ երբեք հազուադէպ չեն: Բուանձք քննէ, արդեօք սէրդ Տէրովդ համար նոյն եռանդը և խանդը պահած է, կ'աճի՞ս Տէրովը գործին մէջ ամէն ատեն, թէ ոչ ջուրի պէս տնկայուն և յեղեղուկ ես, Տէրը կրնայ քեզի վստահիլ, Ան քեզի ընելու գործ կ'ուզէ տալ, պատրաստ ես զայն ընելու:

Բ. Ուրիշ սոսկալի վտանգ մը՝ որմէ խուսափողներ սակաւաթիւ են, աղօթագուրկ կեանք մը ապրիլն է:

Շատ քրիստոնեաներ դժոխքի կրակին պիտի դատապարտուին աղօթքը անտես թողած ըլլալուն իբր հետեւանք: «Արթուն կեցէք և աղօթեցէք որպէսզի փորձութեան մէջ չիշնաք»: Ո՛հ, այն սարսափելի փորձութիւնները, որոնք սրտէն ներս կը խուժեն երբոր աղօթքի հոգին անկից կը ցամքի:

Փրկութիւն չի ճաշակած մեղաւորին դժոխային տառապանքները տւելի տանելի պիտի ըլլան քան թէ աղօթքը անտեսելով գողջութեան և անտարբերութեան անձնատուր եղած անձին:

Գ. Անհաբեւութիւնը ուրիշ վտանգ մըն է.— Եթէ կարելի ըլլար նշմարել տակաւ առ տակաւ կեանքի մէջ սպրդող անտարբերութիւնը, դիւրաւ անոր առաջը պիտի առնուէր, բայց դժբախտաբար պարագան շատ տարբեր է յաճախ: Այս վտանգին ենթակայ քրիստոնեան պէտք է արթնցուի

Սր. Հոգւոյն միջոցաւ: Այսպիսի պարագաներուն է որ եղբայրներ զիրար պէտք է ուղղեն աղօթքով և սիրոյ հոգիով:

Դ. Անկումը մեծագոյն վտանգներէն է (Գործք. Ա. 25).— Մեղաւորը այս վտանգին ենթակայ չէ, որով զգուշանալու ալ պէտք չունի անկէ, որովհետեւ արդէն իսկ անմեղութենէ անտնկացած է ան: Իրեն սկառն սցող միակ վտանգը մեղքի մէջ և անդարձ մեղեկութեւ մէջ կը կայանայ: Բայց քրիստոնեան զգուշանալ պէտք է մեղքին այն տիղմէն որմէ Բրիստոս զինք փրկած է իր անհուն գթութեամբ: Որով՝ քրիստոնեան մեղքի ենթակայութենէ զերծ կացուցուած չէ: Իրաւ, ան ազատուած է մեղքէ, բայց մեղքի դէմ հաւատարիմ և յարատեւ պատերազմը միայն իրեն պիտի կրնայ տալ յաղթանակ:

«Ով որ մինչեւ վերջը կը յորտաւեւէ (համբերէ) անիկա պիտի տպրի» (Մատթ. ԻԴ. 13):

Ո՛րքան խոսամիտից դարձ ունեցող և նոր ճամբուն մէջ հաստատ սկզբնաւորութիւն մը ունեցած անձեր ի վերջոյ ինքնահաճութեան տիղմին մէջ ընկղմելով, կամ բացէն ի բաց ետ երթալով կորսուած են:

Ո՛վ հաւատացեալ, զգուշացիր այս վտանգներէն. և, ո՛րքան հոգիներ կան որոնք քու աջակցութեանդ կարօտ են: Եւ եթէ դուն չի փութաս օգնելու, անոնք կրնան կորսուիլ այս վտանգներուն պատճառաւ:

Մեր առջեւ դրուածը փառաւոր ճամբայ մըն է, բայց Ստատանան մեզ իր վարմին մէջ ձգելու կ'աշխատի: «Դնով ծախու առնուեցաք», զգուշացէք որ մեր աշխատանքը չի կորսնցնենք:

Թարգմանեց

Պէյրուք

ՏԻԳՐԱՆ ԽՆԴՐՈՒՆԻ

ՄԱՆՄԱՂՈՒՏ ԹԷ ԽՈՐՈՒՆԿ

Ժրաջան գետը զուարթօրէն կը հոսի դէպի ծով. արդեօք անոր յատակը խորովնկ է քէ ո՛չ, ո՞վ գիտէ:

Խնդուլի ձայներ կը լսեմ, արդեօք անոնք վաղանցիկ քմահաճոյքի մը արդիւնքն են, թէ ոչ ներքին խաղաղութեան:

Սիրոյ արտայայտութեան մէջ, խօսեցեալ շարաններ կան անհամար: Սիրան է թէ ո՛չ շրթանքն է խօսողը: ձեռքս ունիմ իրարու նման մեջալնետ, մին՝ արժէքաւոր, միւսը՝ անարժէք: Ինչպէ՞ս կարելի է զանազանել կեղծք՝ անկեղծեմ, սուտը՝ նեմատեմ, ծանծաղը՝ խորունկեմ:

Մարդոց սիրտը նման է խորունկ ովկիանոսի մը, զայն խուղարկել ու գիտնալ յատակը, դժուար գործ է. ան կը կարօտի երկար ժամանակի, մեծ համբերութեան և փորձի: Ահա՛ թէ ինչո՞ւ յաճախ դժուարութեանց կը բախինք մեր յարաբերութիւններու մէջ, մարդոց հետ, յուսախաբութիւններու կը մօտանաինք մեր բարեկամութիւններուն մէջ: Ո՛հ, թէ աւելի՞ դանդաղ ու իմաստո՞ւն ըլլայինք այս խնդրին մէջ:

Քրիստոնէութիւնը՝ զգեստ մը չէ՛, որպէսզի զայն հագնինք, ո՛չ ալ զարդեղէն մը՝ զոր վրանիս կրենք ուզած ատեննիս միայն. ո՛չ, անիկա կեանք է, զոր կ'արժէ ապրիլ: Քրիստոնէութիւնը, ներքին ու արտաքին կեանքը կը պարունակէ: Ան պողատու ծառի նման խորունկ արմատներ կ'արձակէ յատակը: Անիկա խորունկ ու լուռ հոսող ջուրի մը նման կը յառաջանայ առանց այլայեւելու: Հովերն ու հոսանքներն անոր ընթացքը փոխելու


կարող չեն: ձեմարիս քրիստոնէան՝ ըստիպուած է յաճախ հոսանքին հակառակ ընթանալու, մարտնչելու, որպէսզի յաղթութիւն տանի ամէնօրեայ փորձութեանց մէջ: Ան առանձին միալու է երբեմն: Անոր խորհուրդները, զգացումները, փափաքները, խօսքերն ու կեանքը միայն Տէրոջ համար են: Թէեւ երբեմն անոր աստեղազարդ կամարը, թուխ ամպերը կը մթափեն, սակայն փա՛ռք Տէրոջ, երկար չեն տեւեր այդ պահերը, երկնային պայծառ լոյսը՝ կը փարատէ խաւարն ու յուսահատութիւնը, կոսկածն ու աղիւրութիւնը: Անիկա կանչուած է կենդանի վկայ մը ըլլալու, անկեղծութեան, հաւատարմութեան, անճնութեան եւ բարութեան:

Սակայն այսպէս չէ՛ կեղծ քրիստոնէան: Եթէ այս աշխարհի մէջ ան ճանչցուի իբրեւ անկեղծ մէկը, օր մը յաւիտենականութեան մէջ երեւան պիտի ելլէ, մե՛ծ ապշութեան մօտենելով իր շուրջիները, նաեւ ինքզինքը: Ո՛հ, ի՞նչ ամօթալի խարկաւք ու անտանելի՞ տապալայ:

Ո՞վ Տէր, փրկե՛ զիս Քու անուանդ քնաս բերելե, զիս խորունկ քրիստոնէական կեանքին մէջ առաջնորդէ (Յովհ. 10. 10):

Ծրուադեմ

Բ. Գ. Ե.



«Ասուած Իր գործին համար կը դրկի անոնք, որոնք Իրեն մօտ կ'ապրին»:

«Երբ Ասուած սէր հաղորդէ մեզի, Ինքզինքը կը հաղորդէ, որովհետեւ Ասուած սէր է»:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՐՎԵՑՆԵԼ

(Շար. Գախոռդ քիւէն եւ վերջ)

Մայրը մեծ հոգ կը տանի որ պզտիկներն բարկացոտ չըլլան: Գիւրադրգիւ և ցոսկոտ բնուորութիւնը տգեղ է և կը տանի զգուելի անքաղաքավարութեան: Ընտանիքներ կան որոնք բնութեամբ ցածկոտ են և հետեւապէս խիստ կամ կէս-բարկացած ծայրով խօսակցութիւն չառ յաճախ է անոնց մէջ:

Երբ մայրիւր և հայրիւրը հեզ ու հանդարտ վարուին, պզտիկներն ալ նոյնպէս կը վարուին:

Բարեկիրթ մայրերը յաճախ լաւ բաներ կը պատմեն իրենց պզտիկներուն:

Մասնաւոր հոգ տանելու է որ անոնք սորվին բարի ու փափկանկատ ըլլալ հանդէպ ծերերուն և աղքատներուն: Գիտնալու են թէ առ հասարակ հանդէպ ամէն մարդու քաղաքավար ըլլալ պէտք է, առանց նկատելու անոնց իւրաքանչիւրին արժանաւորութեան աստիճանը:

Վերջապէս յիշենք թէ առանց մարդասիրութեան քաղաքավարութիւն չըլլար, բայց կրնայ ոք բարեսիրտ ըլլալ և սովորին անքաղաքավար վարմունք ունենալ յաճախ: Քաղաքավարութիւնը արուեստ մ'է զոր սորվելու են փոքրիկները: Քաղաքավարութիւնը բնագոյ մը չէ այլ խորհուրդ և վարժութիւն կը պահանջէ: Ուստի ծնողք պէտք է յատկապէս վարժեն իրենց զաւակներն այս գեղեցիկ արուեստին մէջ: Ատիկա ընելու առիթը ամէն օր ունին և երբեմն ալ մասնաւոր առիթներ:

Դիցուք թէ մեծ մայրիկը այցելութեան պիտի գոյ ձեզի և շարաթմբ պիտի մնայ: Ան 70 տարեկան է: Ութ տարեկան զուարդ, Իսկուհի, և 11 տարեկան ուսարդ, Փառնակ, պիտի երթան կայարանը զինքը դիմաւորել և տուն պիտի բերեն: Կրնաս անոնց հրահանգ տալ առաջուց ու այնպէս զրկել:

— Երբ մեծ մայրիկը տեսնէք չոգեկառքին փաթֆօրմին վրա, իրեն կը դիմէք, ու դուն, Փառնակ, կ'ըսես, «Բարեւ, մեծ մայրիկ, ի՞նչպէս ես, պաշտակող ինձի տունը»: Եւ իրեն կ'օգնէ որ վար իջնէ: Իսկ դուն, Իսկուհի, կ'ըսես «Բարեւ, մեծ մայրիկ, բարով եկար, հովանոցդ ասնեմ»: Այս խօսքերը ուրախ ծայրով և ժպտելով պիտի ըսէք: Կառք առնելու տանող նախ մեծ մայրիկ թող ելլէ, յետոյ Իսկուհին, յետոյ դուն: Կառքին վարձքը դուն կը փութաս վճարել կառավարին: Իսկուհի, եթէ մեծ մայր չխօսի, իրեն կ'ըսես. «Մեծ մայր, ծամբէն յոգնած ես, բան մը կա՞յ զոր կրնամ քեզի համար ընել»: Եթէ բան մը չըսէ, դուն այլեւս լուռ կը մնաս: Երբ մեր տան առջեւ կառքէն իջնէք, Իսկուհին թող առջեւէդ քալէ, դուն անոր ետեւէն մեծ մայրին հետ, և երբ իմ դէմ ելլէք, կ'ըսես, «Մայր, ահա բերինք մեծ մայրիկը: Աչքդ լոյս»:

— Եւ չպիտի վազենք, մեծ մայրիկին ոտքովը պիտի քալենք, որպէս զի չունչը չհասնի:

— Ապրի'ս, Իսկուհի, աղէկ կը խորհիս:

Ծնողք չմոռնա՛ն հաւնիլ պզտիկներուն աղէկ խօսքերուն եւ արարներուն: Իրենց հաճութիւնն ու գովեստը արտայտելով թող քաջալերեն զանոնք:

Մ. Ս. Գ.



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՐՈՒ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ԿՐԱԿԻ ԿԱՅԾԵՐ

Վահան գիւղ մը կ'ապրէր, և գիւղէն փոքր ինչ հեռու կ'ար ընակ մը, իր հօրեղբորորդին Գրիգորը իրեն նըւիրած էր կայմերով և առագաստներով զարդարուած գեղեցիկ նաւակ մը, պատրաստ ջուրը իջեցուցելու։ Վահան իր ընկերներէն կազմեց նաւատիրերու խումբ մը, ինքը եղաւ նաւապետ։ Որոշեցին նաւակը ջուրը իջեցնելու հանգէսը կատարել չարաթօրը ժամը երեքին։

Նշանակուած օրը Վահան կանուխ արթնցաւ, քնաց նաւակին պտնուած տեղը և զարմանքով տեսաւ որ նաւակին յատակը ծակուած, կայմերը կոտրուած և առագաստները պտառուած են։ Յուզմունքէն քար կտրեցաւ։ «Գիտեմ թէ ո՛վ ըրած է սաիկա, ըսաւ ինքնիրեն, բարկութենէն բորբոքած։ Յովհաննէսն է ան, որովհետեւ զինքը չհրաւիրեցի հանգէսին։ Ես փոխարէնը պիտի հատուցանեմ իրեն։ Եւ երբ կը ծրագրէր իր ընելիքը Գրիգորը վրայ կու գայ։ Կը պատմէ եղելութիւնը Գրիգորին և կ'աւելցնէ։ «Ասոր համար ես զինքը պիտի պատժեմ»։

— Ի՞նչ պիտի ընես հարցուց Գրիգորը։

— Դիտես Յովհաննէսը ամէն առաւօտ չուկայ հաւկիթ կը տանի, իր առջեւ թակարգ պիտի լարեմ որպէսզի ինչայ և հաւկիթները կոտորին։

Գրիգորը գիտցաւ որ չարութիւն

պիտի ըլլար անիկա, սակայն փոխանակ յանդիմանելու ըսաւ։

— Իրաւ է որ Յովհաննէսը արժանի է պատիժի, սակայն այդ թաւարդը հին սխառէմ մըն է պատիժի, ես աւելի լաւը գիտեմ։

— Ո՞րն է սաիկա հարցուց Վահան քաջալերուած։

Չե՞ս ուզեր անոր գլխուն վրայ գնել քանի մը կրակի կայծեր։

— Ի՞նչպէս, կրակով պատժե՞նք զինքը, հարցուց Վահան։ Եւ երբ Գրիգոր գլխով հաւանութեան նշան տըւաւ, Վահան ուրախութենէն ցատկեց և ծափ զարնելով ըսաւ։ «Սքանչելի, դուն շատ լաւ մտածեցիր։ Ան շատ խիտ մագեր ունի, ամբողջ գլուխը պիտի բռնկի, ի՞նչպէս ան սողին անդէին պիտի վազէ պոռաւով, զուարճալի պիտի ըլլայ զինքը տեսնել այդ վիճակին մէջ։ Հիմա ըսէ՛ շուտ թէ ի՞նչպէս ընելու եմ սաիկա։

«Եթէ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց առւր անոր, և եթէ ծարաւ է՝ ջուր առւր անոր, քանզի զայս ընելով անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի գիզես։ Չարէն մի՛ յողթուիր, հապա բարիով յողթէ չարին», պատասխանեց Գրիգորը։ «Ահա թէ ի՞նչպէս կը վարուի Տէրը, և ես գիտեմ որ սաիկա աւելի լաւ պատիժ մը կ'ըլլայ Յովհաննէսին համար»։

— Դուն խաբեցիր զիս, ըսաւ Վահան, սաիկա պատիժ չէ, դուն առւտ

խօսեցաւ ըսելով որ կայծերը կ'այրեն,
իսկ այստեղ ածուխ անգամ չկայ:

— Փորձէ՛ գէթ մէկ անգամ,
քաղցրութեամբ վարուէ Յովհաննէսին
հետ և տես թէ անիկա աւելի գէ:
պիտի չըլլա՞յ քան ծեծն ու հայհոյան-
քը: Քաղցրութիւնը ուտող կրակ է և
լիովին կը փծացնէ չարութիւնը, նա-
խանձը և կը տաքցնէ ստոած սրտերը:
Եւ այդպէս ըսելով ցանկապատին վը-
րայէն ցատկելով քալեց ճամբան ու-
րախ սրտով:

— Թող այդպէս ըլլայ ըսաւ Վա-
հան որ չար տղայ մը չէր, այլ այդ
րոպէին՝ շատ գրգռուած էր: Խորհեցաւ
թէ ի՞նչ կրակի կայծեր կ'ընայ ժող-
ուել Յովհաննէսին գլխուն վրայ:
Միտքը եկաւ որ Յովհաննէս կարգալ
շատ կը սիրէր և ինքն ալ շատ գիր-
քեր ունի: Եւ երբ դեռ կը մտածէր
իր ընելիքին վրայ, ահա հեռուէն կե-
րեւնայ Յովհաննէսը, որը մէկ ձեռքով
բռնած էր կողովը հաւկիթով լեցուն,
միւս ձեռքով կաթի տմանը: Ստատ-
նան միաքը բերաւ որ ի՞նչ լաւ պի-
տի ըլլար Յովհաննէսը հիմա այս վի-
ճակով թակարդին մէջ ձգել, սակայն
անմիջապէս իրմէ հեռացուց այդ խոր-
հուրդը և մօտենալով անոր հարցուց:

— Յովհաննէս, դուն հիմա աղտոտ
տոնն ունի՞ս կարգալու: Յովհաննէս
Վահանը տեսնելով նկատելի կերպով
չփոթեցաւ, պատասխանեց, սակայն,
թէ այժմ աւելի ժամանակ ունի, բայց
ցաւալին ան էր որ գիրք չէր կրնար
գտնել:

— Կ'ուզե՞ս կարգալ իմ նոր
գիրքս ճամբորդութեան վրայ գրուած,
հարցուց Վահան: Յովհաննէսին աչքե-
րը փայլեցան ուրախութենէն: Ճիշտ,
դուն փոխ տաս զայն ինձի, ես կը
խոստանամ լաւ հոգ տանելու: Ես
տակաւին ուրիշներ ալ կ'ուտամ քեզի
ըսաւ Վահան և տեւցուց, արդեօք

գիրքս Յովհաննէս թէ ո՛վ կ'ուտած է
նաւակը:

Յովհաննէս կախեց գլուխը, և ը-
սաւ. «Ո՛հ Վահան, ես եմ մեղաւորը և
հիմա խղճահար եմ, և կարող չեմ ը-
սելու քեզի իմ ցաւս: Կ'երեւի որ երբ
գիրքերը առաջարկեցիր, դուն չէիր
գիրքեր այս պարագան:

— Ճիշդն ըսելով, այս բանին հա-
մար իմ կատկածս քու վրադ էր, պա-
տասխանեց մեղմիւ Վահան:

— Ուրեմն հակառակ անոր...
Յովհաննէսը չկարողացաւ վերջացնել,
արցունքները սկսան խեղդել զինքը,
կարմրեցաւ և անկարող բան մը ըսե-
լու՝ շուտով հեռացաւ:

«Այդ ածուխը իրապէս կ'այրէ
կոր, մտածեց Վահան, իրեն բարիք ը-
նելու կերպը իր հաւկիթները փշրե-
լէն լաւ եղաւ, ըսելով ան ուրախ
զուարթ վազեց տուն նախաճաշը ը-
նելու:

Երբ նաւապետը և նաւաստիները
որոշեալ ժամուն հաւաքուեցան լճափը
Յովհաննէսը գտան հոն, որ բոլոր օրը
աշխատելով նաւակը կարգի բերած
էր: Նաւակը բոլորովին պատրաստ
էր, զայն իջեցուցին ջուրը: Ամէն
բան շատ լաւ ընթացաւ: Վահանին
սրտին մէջ այնպիսի մեծ ուրախու-
թիւն կար որ իր կեանքին մէջ ա-
նանկ օր մը ունեցած չէր:

«Իսկապէս ինձի պէտք է այս ա-
ծուխէն միշտ մեծ պահեստի մը ու-
նենալ կ'ըսէր ժպտելով՝ իր հօրեղբոր-
որդիին»:

Ով սիրելի ընթերցող պատանի-
ներ, ո՛րքան հաճելի պիտի ըլլար եթէ
դուք ալ հետեւէիք Վահանին օրինա-
կին, որ Յիսուսի օրինակն է:

«Բարի Լուր» ԿՆ

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Ա. Յակ. 1.13 ին մեջ կ'ըսուի թե Աստուած մեկը չփորձեր, ասկայն Ծնունդ. 22. 1 ին մեջ գրուած է թե, «Աստուած փորձեց Աքրահաւը: Ի՞նչպէս հաշտեցնելու է այս երկու համարները:

Բ. Եթէ Աստուած կը փորձէ մարդը, եւ Սասանան ալ միեւնոյնը կ'ընէ. ի՞նչպէս զանազանելու է Աստուծու եւ Սասանային եկած փորձութիւնները:

Պատ.— Ա. Այս երեւութական հակասութեան մեջ կայ գեղեցիկ ներդաշնակութիւն: Թերեւս շատեւն ուշադրութենէն կը վրիպի յիշեալ Յակ. 1.13 ին մեջ «Աստուած չար բաներով չփորձուիր, ոչ ալ ինքը մեկը կը փորձէ», խօսքը: Այդ կը նշանակէ թէ Աստուած փորձի կ'ենթարկէ ասկայն ոչ չար բաներով, գեշ շարժառիթներով, յոռի վախճանի մը համար: Եսայ. 28. 28 ին մեջ ըսուած է նմանութեամբ մը թէ ան ցուեեր կը ծեծէ սակայն չփերէ: Մատթ. 3. 3 ին մեջ Աստուած արժաք հաշտեցնողի մը պէս կը ներկայանայ մաքրելու եւ զտելու նպատակաւ, այլ խօսքով մեզ արթցնելու համար (Եբր. 12. 10): Իսկ Սասանան կը փորձէ չար բաներով, գեշ շարժառիթներով կործանելու համար մարդիկը: Սասանան փորձեց Եւան որ իր մարմնաւոր ախորժակին յագորդէր սայ, արդիւնքը եղաւ մահ: Դաւիթը փորձեց իր փափաքին զոհաւորել սայու, եւ այդ բերաւ իր զխուռն դժբախտութիւն:

Բ. Փորձութիւններ երբ կու գան մարմնաւոր ցանկութեանց եւ կրից խոյովակով՝ Սասանային են: Իսկ Աստուա-

ծուս եկած փորձութիւնք իր մեծ սերունդ մղեալ կու գան եւ արդիւնքը միշտ օրհնեալ է, ինչպէս Աքրահաւի պարագային:

Հարց.— Հրեշտակներ ո՞ր մեղքին պարճառաւ ինկան, եւ ի՞նչպէս առաջ ի՞նչ էր ալ իշխանութիւնը զոր չպահեցին: Եթէ անոնք այսօր խաւարի կապերով կապուած են ինչպէ՞ս մարդիկը փորձելու եւ կորսեցնելու համար իր շրջին:

Պատ.— Այնպէս կ'երեւի որ հրեշտակաց մեկ մասին մեջ ծառանակին ընդունութիւն մը ծագեցաւ Աստուծոյ կամքին եւ օրհնեցնելուն դէմ: Առաքեալը կ'ըսէ թէ ասկիս արդիւնքն էր իրենց հպարտութեան (1 Տիմ. 3. 6): Հաւանական է՝ որ իրենց իշխանութեանց մեջ (Յուդ. 6) մեծասիրական ըլլալ ուզեցին, այսինքն Աստուծոյ հաւասար իշխանութեան մը ցանկացին: Մենք կ'անգիտանա՞նք թէ ի՞նչ բան մղեց զիրենց այսպիսի ժամանակը փայլ մը առնելու: Յանձնալն դէպք, այս բանը նկատուեցաւ մեծ մեղք եւ պատճառ եղաւ անոնց անկումին: Անոնք թեպէտ ինկած են իրենց բարձր դիրքին, ունին ասկայն մեծ գործիքն չարիք գործելու: Յիւրաքանչեւ անոնք խաւարի կապերով կապուած են, ասկայն որոշ ազատութիւն մը կը վայելեն, եւ իրենց սահմանափակ ազատութիւնը կը գործածեն մարդիկը կորսեցնելու առաջնորդելու:

Մարդուն մեկուն գեղեցկօրէն ըսածին պէս, անոնք ազատ են որքան իրենց շնորհ կը ներէ:

Ս.

“ԱՂԼԱՅՈՇ ՊԻՐ ԿԵՃԷ, ՄԵՍԷՐՐԷԹ ԻՍԷ ԷՊԷՏԻ”

Հագիգէթէն պու սարմըզ աղլա-
յըշ սարը վէ էյումը տըր, հէր կէօզտէ
կէօզ եաշը վար, Տէրա սահիպի օլան
օլ պէօյիւք զաթ էյէմ չէքէրէք աղլա-
տը: Օ (Յիսուս) նէ գաւաթը զիգըյմէթ
կէօզ եաշլարը տէօքտիւ պիղէ չօգ մա-
լիւմ տէյիլ տիր, կիզլիտէ պիղիւմ ի-
չուն նէ գաւաթը աղլատը անճագ Սէ-
մավի Փէտէրի պիլիւր:

«Յիսուս աղլատը» Հազարոսըն
մէզարը էօնիւնտէ տուրարագ, քէզա
պիր կիւն երուսապէմէ նագար գըլար
իքէն, զիյարէթիւնին վագթընը պիլ-
մէտիյի իչուն աղլատը: Օ Դեթսեմա-
նիտէ տախի աղլատը: «Օ տախի ճէ-
սէտտէ պուլունտըղը զէման աղիւմ
Ֆէրեատ վէ կէօզ եաշլարը իլէ նիյազ
վէ բէճալէր էթտի . . . » (Իպր. 5. 7):
Տիւնեա գուրուլալըտան պէրու հէր
ասրատ Ալլահըն գալմընըն պու տիւն-
եատա նաաիպի կէօզ եաշը տէօքմէք
օլմուշ տըր, Սէմավի Փէտէր էվլատ-
լարընըն տախի կէօզ եաշլարընը կէօ-
րիւր վէ պիլիւր Դուիթ, Դանիէլ, Ե-
րեմիա, Պօղոս վէ տահա իսմիլէրի պի-
ղէ մալիւմ օլան վէ օլմայան պիւնլէր-
ճէ էվլատ Ալլահըն կէօզ եաշլարը
փուստը կիպի ազմըշ տըր: Էֆէնտի-
միզ փէշիւնէն սէօյլէտի: «Հագիգաթէն,
հագիգաթէն սիղէ տէրիւմ քի, սիզ աղ-
լայըպ Ֆիղան էտէճէքսիւնիզ, ամմա
տիւնեա մէսրուր օլաճագ տըր. սիզ
մահզուն օլաճագսընըզ, լաքին հիւզ-
նիւնիւզ մէսէրրէթէ տէօնէճէք տիր
(Յովհ. 16. 20). էվվէթ եիւզ պիւնլէր-
ճէ մուգատտէսլէր վէ չէհիալէր կէօզ
եաշլարը տէօքէրէք էլէմ չէքտիլէր
ճանլար իչուն, լաքին անլէր չիմտի
չէքտիլէրի էմէքէրիւնտէն իսթիրա-
հաթ էթմիշ տիրլէր, անլէր պիր կէճէ

գաւաթը աղլատըլար պու տիւնեատա,
Ֆագաթ չիմտի էպէտի մէսէրրէթ իլէ
մէսրուր օլապ՝ օլ էպէտի կիւնէ միւն-
թաղըր տըրլար: Անլէր պու զէմիւնտէ
իքէն էօնլէրինէ գօնուլան մէսէրրէթի
միւշահատէ էթտիլէր. միւսթագպէլ
ճէլալ վէ սաաաթէթի իման իլէ սէյր
էթտիլէր, վէ պու տէօքտիւքլէրի
կէօզ եաշլարը փէք ազ սօնկըտ, սա-
պահըն շաֆաղընտա մէսէրրէթէ թէպ-
տիլ օլաճաղընը գալիյէն պիլիպ՝ մէվ-
գիլէրինտէ սաաթը վէ սապիթ գալ-
տըլար: Շիմտի հալա տիւնեանըն կէ-
ճէսիւնտէ եաշլամագատիզ, վէ պիր ազ
տահա էլէմ չէքէրէք աղլամամըզ կէ-
րէք տիր, պու իսէ քէնտիմիզ իչուն
տէյիլ, իլա սէվկիւլիւ ճանլարըն իւշ-
լաա պուլմալարը իչուն տըր: Ալլահըն
Քիլիսէսի միւթմէին տիր քի կէճէ
կէչմէքտէ վէ կիւն աղարմագատա տըր,
պուլութըզ օլան չօլ միւպարէք կիւն
վէ սապահ կիթտիքճէ եագլաշըյօր, օ
զէման «կէօզ եաշլարը իլէ էքէնլէր
մէսէրրէթլէ պիչէճէքլէր, աղլայըշլէ
շըգրպ կիտէն, էլպէթտէ տէմէթլէրի-
նի կէթիլէրէք մէսէրրէթլէ տէօնէ-
ճէք տիր» քէյումը իթմամ օլունաճագ
տըր (Մէզ. 126. 5-6): Տիկէր թարաֆ-
տա, չիմտի կիւլիւպ սէվիւնէքտէ օ-
լան տիւնեա օլ կիւնտէ իլէլէպէտ աղ-
լայըպ Ֆիղան էտէրէք տիւնլէրինի գը-
ճըրտաճագ տըր: Սէվկիւլիւլէր, պիր
ազ վագթ տահա տիւնեա պիղէ զահ-
մէթ վէրիպ աղլատաճագ տըր, լաքին
տէօքիւլէն ճիւմլէ կէօզ եաշլարընը
Սէմավի Փէտէր թուլումընա գօյմագ-
տա տըր: «Վէ Ալլահ անլէրին կէօզ-
լէրինտէն ճիւմլէ կէօզ եաշլարընը սի-
լէճէք տիր, վէ էօլիւմ տրթըզ օլմա-
յաճագ, վէ տրթըզ հիւզն վէ Ֆէրեատ
վէ աղըր պուլունմայաճագ տըր» (Վա-
հի 21. 4) համալար օլսուն: Ամին:

Ինկ. միւթ. Կ. Յ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱՍԸՆԸ ՔՐԻՍՏԻՅԱՆ ՕԼՄԱԼԸ

Ալլահըն Բուհուհըն գումարիկէ պիր քիմսէ եէնիտէն տողմազսու տալա խէլաս օլումազ, Բուպպ Յիսուս Յովհ. 3. 7 տէ տէյօր «եէնիտէն տողմանըզ լազըմ տըր» պու մութլազ լազըմ տըր, Հիչ պիր շէյ եէնի տողուշն եէրինի թու թամազ, Վաֆթիզ եէնի տողուշա պէտէլ օլումազ, Բիլիսէյէ տզա ետ- զըլմազ եէնի տողուշն եէրինի թու թ- մազ, Պիլիսէյի Սիմօն վաֆթիզ օլ- տու խաի (Ամալ. 8. 13), լաքին Պետ- րոս վէ Յովհաննէս անըն նէ սիյրէթ- տէ օլտուզընը անլատըզ լարընտա Պետ- րոս անա տէտի «Պու շէյտէ սէնին հիսսէն վէ նոսիպին եօզ տըր, զիրա գալպին Ալլահըն ինտինտէ տողրու տէ- յիլ տիր . . . զիրա սէնի էօտ ուճըլը- ղընտա վէ հազգսըզըլըն պէնտինտէ կէօրիւյօրու»։ Իշթէ վաֆթիզ օլմուշ պիրի, լաքին զայ օլմուշ պիր կիւ- նանքետր։

Տինի աշնու տաթթլէրին իճրասը եէնի տողուշն եէրինի թու թամազ, Զօգլար քէնտի տուալարընա, Բիթա- պը Մուգատտէսի սգումալարընա, քի- լիսէյէ կէթմէլէրինէ, Սրբութիւն ալ- մալարընա վէ սաիր Ֆարգլարը իճ- րա էթմէլէրինէ կիւվէնիլլէր, Պուհ- լարըն հիչ պիրիտէ եէնի տողուշա պէտէլ օլումազ, Զօգլար տէրլէր «Պէն Բէտուլլարըն իման իգարը- նա, պէն Աթանասեան, ետ Նիկիտ իման իգարընա ինտըրըմ, պէն Օրթօտօքըմ, պէնիմ Բրիստոս հազ- գընտա գանըշըմ տողրու տըր, Բի- թապը Մուգատտէսին տողրու օլտու- ղունա ինտըրըմ, Բիթարէթէ ինտը- րըմ»։ Սէն պուշլարըն ճիւմէսինտէ տողրու օլուպ ինանապիլիբսին, աշնի

վազըթտա իլէլէպէտ հէլաք օլա պի- լիբսին։

Թալիմ վէ իսլահաթ, վէ խարի- ճէն միւսթազիմ վէ միւթէպէր պիր էօմրէ մալիք օլումազ եէնի տողուշա պէտէլ օլումազ, Մէսէլէ խարիճէն էյի տողրու կէօրիւնմէմիզ տէյիլ, իլլա գալպին տէրինիլլէրինտէ տէրունի էօմրիւմիզին անվալը տըր, Վէ ան- ճազ խարիճի էօմրիւնիւ իսլահ էթ- մէք սէնի խէլաս էթմէզ։

Պօզուզ պիր էլմա

Ֆարզ էթ քի պօզուզ պիր էլմայը էհլի սէնտաթ պիր ատէմէ կէօթիւր- սէմ, վէ տըշընը մուժ իլէ գալիլիթ- սամ վէ անա էն կիւզէլ էլմա բէնկի վէրիլսէ, երիւ էլինին պօզուզըլը աշնի սսւրէթտէ պօզուզ տըր, Վէ պիր ըսըրմա իլէ պօզուզըլը մէյտանա չը- գար, Մէսէլէ պու տըր քի Բրիստոս- սըզ սէն գալպէն պօզուզսըն, վէ սալթ մէտէնիլլէթ, իսլահաթ, մէթէպէր պիր էօմր, սալթ ալալազիլլէթ, սէնի մուժ իլէ գալիլայը պօյամուղա պէնզէր, Սէն թէպաիլ օլմալըսըն, թա սէնին մահիլլէրին տէրինիլլէրինէ գա- տար թէպաիլ օլմալը սըն, «Հազիգա- թէն հազիգաթէն սանա տէրիմ քի պիր քիմսէ եէնիտէն տողմայընճա մէլէքիլթ Ուլլահը կէօրէմէզ» (Յովհ. 3. 3)։

Սէն եէնիտէն տողմուշ մըսըն, Զօգլար պէօյլէ տէր, «Խայր տէյիլիմ, նէ հալիմալը իմ քի եէնիտէն տողա- յըմ»։ Նէ հալիմալընը Յովհ. 1. 12 տէ պուլլալըն, «Հէր քիմ տնը գապուլ էթտի իսէ տնլէրէ, հանի իսմէնէ ի- ման էտէնլէրէ էլվալտ Ուլլահ օլմազ- լըզա սէլահիլլէթ վէրտի»։ Պիզ քէլա-

մընա իման էտէրէք Քրիստոսը գա-
պուլ էթտիյիմիդ տագիգէտէ Ալլահըն
Ազիզ Րուհու իլէ տիր քի Կէնիաէն
տողարըզ: Սէն Քրիստոսը գալպինէ
ալտըղըն կիպի, պիր տագիգէտէ Օ
սէնի քեամիլէն թէպտիլ էտէր: Նէ
գտտար տա տիւնհալի, կիւնահքեար
վէ սէրթ ոլտան Ֆարգ էթմէզ: Հէր
քիմ պու կիւն գալպինի Քրիստոսա
ալըպ անը իչէրի գապուլ էտէր վէ
Անըն իտարէսինէ թէսլիմ ոլտըն իսէ
պիր տագիգէտէ Ալլահ օ Ֆէրտի Կէնի
պիր մախլուգ էտէր: «Օղլա մալիք
օլան հայաթա մալիք տիր, վէ իպն
Ուլլահա մալիք օլմայան հայաթա
մալիք տէյիլ տիր» (1 Յովհ. 5. 12):

Տր. Բ. Ա. ԹՕՐԻ



ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ(*)

ՏՕՍԹԱՆԷ ԹԵԼԳԻՆԱԹ

Պու սէրլէհվա իլէ պիր սըրա
գըստա նասիհաթլարա միւպաշէրէթ է-
տէճէյիզ, անյէր տվալա միւնասիպ
չէյլէր օլաճագլար, մագսէտ խոյր տ-
մէլէ նէֆսինքեարլըղա, ֆէտտքեար-
լըղա թէչվիպ էթմէք տիր: Թազսիյէ
էտէրիզ քի պու նասիհաթլար մասանըն
իւզէրինտէ էօյլէ պիր մահալա գօ-
նուլտուն քի տաիմա անյէր կէօզէ իլի-
չէ: Տիւնտար պիր քիմսէյէ էն զիյատէ

լազըմ օլտն շէյ նէ՞ տիր, Կալընըզ ա-
նա պու շէյլէրի տէրխաթր էթտիր-
մէք տիր:

1. Մուհապպէթ. — Հիւսնի մէչ-
րէպ սահիպի վէ խայրխահ օլ, սիմա-
նը Ֆէրահ սագլա, հաթթա Կալընըզ
օլտըղըն զէմանտա պիլէ:

Գապա, ատի վէ նամէրտ մուա'մէ-
լէլէրի կէօրմէզտէն կէչ: Արդուլարը-
նա գարչը շէյլէր վուգո'ւ պուլտու-
ղընտա թիթ իզլէնմէյէրէք օնլարա րա-
զի օլ, պու՝ պաշգալարընա սիրուր վէ
քէնտինէ սէվինճ սէպէպի օլաճագ:

Պաշգալարը խօշնուտ, մէմուռն վէ
թէսէլլի էթմէյէ շալըչ, պաշգալարը-
նա Կարտըմ վէ լազըմ օլտնը էթմէյէ
ճէհա էթ, պուլար հատաը գաթընտա
խօշ շէյլէր տիրլէր:

Պաշգալարըն ճանլարը իչիւն է-
յի պիր շէյ Կաիմաղա զայրէթ էթ:
Ճիտտի, կէրմիյէթլէ վէ ճէսարէթ-
պախչ պիր սէօզ, պիր քէլամ, սէսիզ
արզ էտիլէն պիր տուա, ճանլարըն
խէլասը էմրինտէ պէօյիւք խըզմէթլէր
կէօրիւրլէր:

Ֆիլան Ֆիլան քիմսէլէրէ տողրու
գալպինտէքի պուլզ վէ իքրահիյէթէ
զալիպ կէլ, անյէր իլէ կէօրիւչմէքտէն
իճթինապ էթմէ, կիթ անյէր իլէ կէօ-
րիւչ: Ալլահ սէնին էօնիւնտէն կիտէ-
ճէք տիր:

Հաթթա տաիմա սէնին Կօլուն
իւզէրինտէ տուրան վէ սանա օսանճ
սէպէպի օլտն քիմսէլէր իլէ պիլէ նէ-
զաքէթ իլէ մուա'մէլէ էյլէ: Օնու Ալ-
լահ սանա կէօնտէրիյօր:

Տէր հալ աֆվ էթ: Ինանըյօր սըն
քի սանա զիյան իրաա էթմէք գաւտ
էտիլմիչ իտի, օ հալտէ աֆվ էթմէք
տահա պէօյիւք Ֆազիլէթ օլմա՞ղ մը:

Սատագանը քիմսէտէն տիրիզ էթ-
մէ: Կալընըզ քի մուճիպին փաք օլ-

(*) Պու ինճվան քանքընա, կէչէն սէնէ
պիլիւն միւսէթէ զագէթալըգա ճարլը մա-
սէլէ ճագաք էրին ռուհաճի հայաք իլէ ալա-
գասար մասէլէր իւզէրինէ պէնսլէր նէր էթ-
թի, անյէր չօզ քագսի էթիլի: Գարիւնընը-
զըն աղուսու իւզէրինէ քէրաւ անյէրի սէվամ
էսէնէյիզ, քապիյէ էտէրիզ ֆի հէրէս օգալըն:

սուր, լէ վէրէրէք տիւշիւն քի Ալլահա վէրմիշ օլուրսըն:

Գոպոհաթլըլը շիտաթ իլէ հիւքմէթմէ, օնա շէֆգաթ էտիպ անըն իշիւն տուա էյլէ:

Ստնա գարշը նիշնէն սուր նիյէթ խայալ էտիյօրսըն, կէօրմէյօրմըսըն քի, օ նէվ թէսալվուր պիլէ սէնի րահաթսըլ վէ պիհուզուր էտիյօր:

Տուտապարըլըն էթրաֆընտա տօլաչան հիւվի թէպէսսիւմիւ մէն էթ, օնա մատաէ օլան քիմսէյի կիւճէնտիւրէճէքսին: Պաշգասընա նիշնէն էլէմ սէպէպի օլասըն:

Բէնտի քէնտինի ճիւմլէնին թահթը եէտինէ իլգա էյլէ: Էյէր մուհապպիթ րուհը իլէ եիւրիւյօր իսէն, Ալլահ միւսա'ատէ էթմէյէճէք քի պիւրիսի սանտ զիյան իրաս էթսին:

ԱՐԷՑ



ՎԱԼԻՏԵՆԻՆ ՏՈՒԱՍԸ

Նէ զէման կէնճ պիր օլլան իտիմ իսէ աինաիզ օլմաղա չալըշըր իտիմ, ֆազաթ պիր շէյ վար իտի քի ծու պէնտէն ուզապաշտըրամայօր իտիմ:

Փէտէրիմ մէյնօր պիր տաէմ իտի, էվտէ վալիտէմէ տօղրու մուամէլէսի սէրթ վէ զալիմանէ իտի, օլ սէպէպտէն վալիտէմին էօմրիւ տըլըլ վէ քէտէր իլէ տօլու իտի: Պու էլէմլէրիւնի թախֆիֆ իշիւն պէնի վէ քիւշիւք

պիրտէրիմի խալվէթէ չէքէր վէ օրտա տիզ չէօքէրէք տուա էտէր վէ պիզի Ալլահա հէվալէ էտէր իտի:

Էօմրիւն կիւճիւքլէրի վէ փէտէրիմին վաշիմանէ մուամէլէլէրի քէնտինի էրքէն մէզարա էնտիւրտի: Պէնիմ էօմրիւմ իսէ ֆէնա օլուպ թէվպէ էտէմէզ, սէրթ եիւրէքլէ պիր կէնճ իտիմ: Սէնէլէր սօնրա սէպալվէթիմի կէշիւրտիյիմ մահալա օղրատըմ: Տէրուհիմտէ գուվվէթլի պիր թէշվիգաթ հիսս էտիյօր իտիմ, օ տա թէփէնին իւզէրինտէ, սէպվէթիմին միւրշիտի օլուպ, օլ գատար էրքէն պիզտէն այրըլմը վալիտէմին մէզարընը կէօրմէք իտի: Անը սէնէլէր էվվէլ նասըլ պրագմըլ իտիմ իսէ էօյլէ պուլտըմ, իւզէրինտէ պիթէն օթլարտան պէլլի իտի քի օրայա այագ պասմամըլ իտի: Օրատա օթուրտըմ: Թէքրար պանա րէճա էտէն սէսինի իշիտիյօր իտիմ: Հէփ քէօթիւ խույլարըմ, Բրիստուսը րէտա էթմէմ պէնի մահվ էտէրճէսինէ թազեիզ էտիյօրլար իտի: Բէնտիմի Բրիստուսա թէսլիմ էթմէյինճէ օլուլը թէրք էտէմէտիմ: Վալիտէմին պէնիմ իշիւն օլան տուալարը պէնի թէպալիլ էտէն լութֆ կիպի պանա կէրի կէլտիլէր, վէ պու կիւն վալիտէմին սատըլ տուալարընըն վէ տուալարը իշիտէն Ալլահըն տիրի պիր շահիտիյիմ:

“Օհ վալիսեմ, շիւշիւնիւրսեմ սեմի Տէր խաբըր հեհրիւմ օլ խաշ էշիւնի, Պեմի օլաշայան շաքիֆ էշիւն, Բրիստուսա ինեսա հեհյօր պեմի”:

Միւր. Խ. Թ. Ս.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԷ

Անգլիոյ վարչապետը կը մերժէ Ա-
ղոթի Ազգ. Օր մը որոշելու խնդրան-
քը.— Անգլիոյ խորհրդարանական ժողո-
վին մեջ հետաքրքրական վիճաբանութիւն
մը տեղի ունեցած է Փետրուար ամսուն
մեջ: Լոնտոն հրատարակուող կրօն. քեր
մը կը գրէ քէ, Խորհրդարանի անդա-
ներէն Վեր. Տոքթ. Ճեյմս Լիքը կը հա-
ցնէ վարչապետ Չեմպերլէյին քէ՝ արդեօք
անհրաժեշտ է այդ պիտի առնե՞ք Աղոթի
Ազգ. Օր մը նշանակելու, աստուածային
օգնութիւն հայցելու որպէսզի յաղթենք
բշտակին եւ արդար խաղաղութիւն մը
ստանք աշխարհի:

Վարչապետը.— Այդպիսի նպատա-
կի մը համար մասնաւոր օր մը որոշե-
լու խնդիրը՝ մեկն է այն խնդիրներէն,
որոն մասին պէտք է կարծիքը ստանալ
ֆրիսոնեայ եկեղեցիներու պէտերուն, սա-
կայն, իմ յարգածան բարեկամն կրնայ
վստահ ըլլալ՝ քէ յարմար տեսնին իր քե-
ղադրութիւնը նկատի պիտի առնուի:

Մր. Տեյլիսը.— Վարչապետը կ'ու-
զե՞ ի մէջ ունենայ, քէ գերեւանացիներն
այ աստուածային օգնութիւն կը խնդրեն:

Շարք մը ետքը կրկին այս խնդի-
րը տեղանին վրայ կը բերէ Տոքթ. Լիքը,
որուն պատասխանելով վարչապետը կ'ը-
սէ. «Ինչպէս անցնայ Շարք տեղեկացու-
ցի իմ յարգելի բարեկամիս, երբ յարմար
տեսնը զայն նկատի պիտի առնուի իր քե-
ղադրութիւնը: Չեմ կարծեր, սակայն, որ
այդ ժամը հասած է»:

Մր. Պարր.— Վարչապետը չի՞ կար-
ծեր որ այս խնդիրը աւելի եկեղեցիներ-
ու կը պատկանի քան Պետութեան իր
իշխանութիւնը բանեցնելու այս տեսակ
գործերու մէջ: Երկրորդ, երբ այդպիսի
քուսական մը պիտի որոշուի, պէտք չե՞
որ նախընտրաբար անկիւս ըլլայ աւելի
օր մը ազգ. եւ միջազգային ձախողու-

թեան խոստովանութեան համար, քան քէ
աղոթի՝ պարզապէս մեր բշտակները
ստապելու:

Վարչապետը.— Արդե՞ն ես ըսի՝ քէ
առանց խորհրդակցելու եկեղեցիներու ա-
ռաջնորդներուն հետ, քան մը տեղի պիտի
չունենայ այդ մասին:

Մր. Թըրքը.— Կրնա՞մ պահանջել
որ վարչապետը այս նիւթին շուրջ պատե-
րազնական Սպասարկութեանց պէտերուն
կարծիքը առնէ առաջարկուած բանին
ազդուութեան մասին:

Մր. Սորիսը.— Կրնա՞մ հարցնել
վարչապետին քէ՝ արդեօք պիտի զգուշա-
նա՞յ ո՞ր է քէ արարե՞ք, որ պիտի միշտ
աստուածութիւնը զինուորական յաղթա-
նակին հետ հաճոյական եւ բարբարոս
նշանադրուի:

Տ. Քրիստոնեական եւմարիտ հոգի
մը.— Աւերիկեան քեր մը կը պատկե-
քէ 74 տարեկան տեսարանից մը ինքնա-
շարժի արկածով մը կը մեռնի: Իր մահ-
ուն պատճառ եղած էր խափշիկ մը որ
մտած. խորխոր օր մը կը ֆշէր: Ան-
տարանցին աղբիկը երբ կը հիւսարափի
իր ստացած շուրին տուած առաքին ցըն-
ցումէն, կ'այցելէ խափշիկին տունը ուր
կը գտնէ իր կիներ հիւանդ եւ անտուտ
մնացած. զոգսէ բաղկացած ընտանիք մը:
Հոն կը դրէ քծիշի եւ կերակուր եւ կը
կը համոզէ դատարար հրաժարելու դա-
տարարութենէ, կը վճարէ սեռանորթին
տուգանքին դրամը. ըսելով քէ խափշի-
կը իրեն բաւականաչափ արդե՞ն ներու-
թիւն ունի առանց աւելցնելու վրան ու-
րիշ մը: «Ո՛չ քէ խօսքով ու լեզուով սի-
րենք, հասար գործով ու ճշմարտութի-
նով»: Ահապիսի ֆրիսոնեական ճշմա-
րիտ հոգի մը, գործի յայտ կը բերէ այդ
տեսարանցին աղբիկը:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանիրէի Հայ Աւետ. եկեղեցւոյ Պատ. Հոգաբարձու Ժողովը գեղեցիկ ժեսք մը ընելով որոշած է հիմն գարբեր անձերու մէջ մէկ տարուան «Աւետարանի Ձայն» նուիրել:

Խաբարուքիւնս կը յայտնէ իր յատուկ շնորհակալութիւնները:

ՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՋԱՆԱՍԷՐ», պարբերաբերք եւ օրկան Ջանասիրաց Միութեան: Գեղասիւս եւ ճոխ բովանդակութեամբ: Ինչ որ կ'աւարտացնէ մեզ սակայն, այն է՝ թէ բոլոր հշերուն մեջ կը տիրէ կրօնական շունչ մը:

«ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ», հրատարակութիւն Վեր. Է. Էլ-մանանի: Իր տեսակին մեջ եզակեան, որուն համար մեր յարգելի բարեկամը ինկայած չէ ո՛չ ժամանակ, ո՛չ կորով եւ ոչ ալ դրամ: Ինչը հմուտ երաժիշտ մըն է նաեւ, եւ կրցած է զանազան աղբիւրներէ հաւաքել, բարգիւնել եւ իւրաքանչէր առջին հոյակապ գործը որ կը բաղկանայ 581 ընտելաց երգերէ, եւ որ զոնացում կու տայ միանգամայն թէ՛ անգլիախօսներուն, թէ՛ հայախօսներուն եւ թէ քրիստոնէներուն: Ջերտորէն կը յանձնարարենք զայն եկեղեցիներուն եւ մեր ընթերցողներուն: Դիմեն է՝ երկու ֆուլկս տըսը, փոսի միսը սպաւորողին վրայ: Դիմեն՝

Rev. E. E. ELMAJIAN

1686, Beverly Drive,

Pasadena, Calif. U. S. A.

ՃՇԴՈՒՍ

Թերթիս Մարտի թիւին մեջ 45 րդ. հշիւն վրայ, առաջին սիւնակ, 3 րդ. տող 200 մէքորը կարդայ 200 մղոն: Իսկ Ապրիլի թիւին մեջ կողմին 2 րդ. հշիւն երկրորդ սիւնակին վրայ 5 րդ. տողը կարդայ «միացաւ» եւ ոչ թէ միջոցաւ:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եգիպտոս՝	25	Լ. Գ.
Ամերիկա՝	1 ½	Տոլար
Ֆրանսա եւ Սիւրիա՝	30	Ֆրանկ

Դիտարի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական անձուկ վիճակը, յօժար եմք այդպիսիներուն գեղշեալ գնով մը դիմել թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձուր կամ մեր գործակալին միջոցաւ:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ. — Բոլոր դրամական տուաճումներ, յօդուածներ եւ թղթակցութիւններ պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով. —

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen — Shoubra, CAIRO (Egypt).